ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ
ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ ՄԻՋԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ք.Երևան «11» հունիս 2021 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն)՝ մի Կողմից, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ)՝ մյուս Կողմից, համատեղ հիշատակման դեպքում անվանվելով Կողմեր, կնքեցին սույն Փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) և համաձայնեցին հետևյալի մասին.

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Բանկը Նախարարության համաձայնությամբ և թույլտվությամբ.
   - Կաջակցի հեռավոր սահմանամերձ համայնքներում ապրող երեխաների լրացուցիչ և շարունակական կրթության համար անհրաժեշտ պայմանների ձևավորման և մասնագիտական կողմնորոշման հարցում: Այդ շրջանակներում ի թիվս այլ միջոցառումների մասնավորապես.

     ա) Կտրամադրի համակարգչային սարքավորումներ վեբինարների համար 4-5 համայնքների պետական հանրակրթական դպրոցներին, ըստ անհրաժեշտության ապահովելով նաև համացանցի հասանելիությամբ:

     բ) Աշակերտների համար կկազմակերպի հանդիպումներ մշակույթի, սպորտի, գիտության ոլորտներում մեծ ավանդ ունեցող անձանց հետ, ինչպես նաև ոչ ֆորմալ կրթության և մասնագիտական կողմնորոշմանն ուղղված այլ միջոցառումներ:

     գ) Կկազմակերպի փոխադարձ ճանաչողական միջմարզային այցեր տարբեր մարզերի մասնակիցների համար:

     դ) Մասնակի կփոխհատուցի 12-րդ դասարանների՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու նպատակ ունեցող 3 ակտիվ մասնակիցների ուսումնառության առաջին տարվա վարձը:

Նշված միջոցառումներում կներգրավվեն Բանկի կողմից մրցութային հիմունքներով ընտրված և Նախարարության կողմից հաստատված սահմանամերձ համայնքների պետական հանրակրթական դպրոցներն ու դրանց 9-12-րդ դասարանների աշակերտները:

- Կիրականացնի մարզային բնակավայրերի երիտասարդների էկոլոգիական կրթությանն ու հայրենաճաչության խթանմանն ուղղված միջոցառումներ, այդ թվում մասնավորապես նախապես ընտրված և Նախարարության հետ համաձայնեցված մի շարք հուշարձանները շրջապատող պատմական միջավայրի տարածքում իրականացնելով բարեկարգման և դրանց շուրջ կանաչ գոտիների ստեղծման և շարունակական պահպանման աշխատանքներ: Նշված աշխատանքներում կներգրավվեն միջավայրի դիզայնի ֆակուլտետներ ունեցող բարձրագույն ուսումնական հաստատություններն ու դրանց ուսանողները:

Սույն Հուշագրով նախատեսված միջոցառումների իրականացման ամբողջական ֆինանսավորումն իրականացնելու է Բանկը:

2. Կողմերը հայտնում են իրենց պատրաստակամությունը համագործակցելու նաև ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող այլ ուղղություններով:
3. Նախարարությունը կնշանակի պատասխանատու անձ սույն Հուշագրի 1-ին կետով նախատեսված միջոցառումների արդյունավետ իրականացման համար:
4. Կողմերն իրենց լիազորությունների շրջանակներում կներգրավեն իրենց համապատասխան աշխատողներին սույն Հուշագրով նախատեսված համագործակցությունն արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու համար:
5. Սույն Հուշագրով նախատեսված համագործակցության շրջանակներում Կողմերը կարող են իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Հուշագրի բնույթին և էությանը չհակասող ցանկացած գործողություն, այդ թվում կնքել համապատասխան պայմանագրեր, համաձայնագրեր, կազմել ժամանակացույցեր, համագործակցության իրականացման ծրագրեր և այլն:
6. Կողմերը համաձայնվում են, որ միջոցառումների հետ կապված ցանկացած հայտարարություն կամ հաղորդակցություն պետք է համաձայնեցվի մյուս Կողմի հետ:
7. Բանկը պարտավորվում է Նախարարության գրավոր պահանջով համապատասխան տեղեկատվություն տրամադրել միջոցառումների ընթացքի մասին:
8. Սույն Հուշագրի շրջանակներում կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության համաձայն:

II. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2022 թվականի հունիսի 11–ը:
10. Սույն Հուշագիրն արտացոլում է Կողմերի մտադրությունները և նրանց համար չի առաջացնում իրավական պարտավորություններ:

11. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով և հանդիսանում են սույն Հուշագրի անբաժանելի մասը:
12. Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման մասով ծագող բոլոր տարաձայնությունները և վեճերը կկարգավորվեն Կողմերի միջև բանակցությունների և (կամ) խորհրդատվությունների միջոցով:
13. Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Հուշագիրը՝ առնվազն 2 (երկու) ամիս առաջ գրավոր ծանուցելով մյուս Կողմին այդ մտադրության մասին:
14. Սույն Հուշագիրը կազմված է 2 (երկու) հավասարազոր բնօրինակից՝ յուրաքանչյուրը հայերեն:

Կողմերը՝ ի դեմս իրենց լիազոր ներկայացուցիչների, ստորագրեցին սույն Հուշագիրը վերոնշյալ ամսաթվին:

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից՝	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից՝
ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ	ԱՐԹՈՒՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿԻ ԲԶԳ ՏՆՕՐԵՆ